Երվանդ Նազարեթյան

Գյումրիս

Քաղաք ջան, էս ինչըդ անուշ ես,

Երկնի տակ դու իմ բաց թանգարան,

Օր դայդով խոսաս գը միշտ ըսպես՝

Նախշազարդ քարերով քո անձայն:

Եկել եմ հարազատ գիրկդ անշեջ,

Ու հետդ անդադար կխոսամ,

Խնդամ ու հուզվիմ գը մտքիս մեջ,

Ես հավերժ քու հետդ կմնամ:

Վարպետաց փողոցն է ծո', աշե,

Ավոն է ծանր ու մեծ հոս նստած,

Շիրազը հայրենիք կերգե,

Ֆռունզն էլ խնդա գը աչքը թաց:

Մայլեքդ մշակույթ կշնչեն,

Դարբնոց է քայլ առ քայլ ու դուքան,

Ախ խոսքդ միշտ ընբես թող հնչէ,

Օր ծաղկիս դու ըդպես ու ըդքան:

Լուռ երկեմ, օր երգեն բարձրաձայն,

Ես քեզի սիրեմ գը գժի պես,

Երկնի տակ դու իմ բաց թանգարան,

Քաղաք ջան, էս ինչըդ անուշ ես: